

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 րուր, կէս տարւանը 6 րուր:

Ուսանին համարները 5 կողմով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանագրատուն մէջ:

Օտարաբարտարացիք պիտու են ուղղակի

Тифлис. Редакция «Мелк»

Նմանագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են խորանային թաւին 2 կողմէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս ուսումնասիրենք:—Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն: Էջմիածին և իր ստորադրեալները: Նա-
մակ Մեծ-Ղարաբաղից: Նամակ Աղանից: Նա-
մակ Բաղրից: Նամակ Սարգսից: Նամակ Խո-
բադից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
թիւն: Ֆրանսիա: Անգլիա: Գերմանիա: Աւստրո-
Ունգարիա: Իտալիա: Արտաքին լուրեր:—
ՅԱՅՏԱՐԱՆԻԹԻՒՆՆԵՐ:

ԻՆՉՊԷՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆԵՐ

Մեր թղթակիցը Ստրասբուրգից, պ.
Ա. Արախտեանց այն ուղիղ միտք էր
յայտնում նորերում իր յօդուածի մէջ, որ
նախ քան առաջարկենք թիւրքաց չայաս-
տանին այս կամ այն տնտեսական կամ հա-
սարակական վերանորոգութիւն, պէտք է
ուսումնասիրենք երկրի, յատկապէս դրա
համար մարդիկ ուղարկելով թիւրքաց չա-
յաստանը, որոնք հետզհետէ քննելով, ու-
սումնասիրելով երկրի դրութիւնը, հաւա-
քելով վիճակագրական և այլ տեղեկու-
թիւններ, գիտելով ազգաբնակչութեան պա-
հանքերը:— այդ բոլորի հետ կը ծանո-
թացնեն մեզ և մենք միայն այն ժամա-
նակ կը կարողանանք, ճիշդ տեղեկութիւն-
ներով վրա հիմնելով կազմել մի ընդհա-
նուր գաղափար մեզ գեաւանման թիւրքի
մասին, կազմել մի ընդհանուր տեսութիւն
թէ ի՞նչ է հարկաւոր երկրին և ի՞նչ մի-
ջոցներ գործ դնենք որ իրագործենք այս
կամ այն տնտեսական բարելաւութիւն երկ-
րի մէջ:

Ահա մտաւորապէս այն միտքը, որ
յայտնում է մեր աշխատակիցը. և ճշմա-
րիտ որ և է երկրին օգուտ բերելու հա-
մար ուրիշ ճանապարհ չը կայ, բացի այդ
ճանապարհից, որ հիմնված է ճիշդ գի-
տութիւնների սխտեմայի վրա:

Եթէ կամենում էք օգուտ տալ մի երկ-
րին, նախ և առաջ ճիշդ կերպով ուսումն-
ասիրեցէք այդ երկիրը:— դա անհրաժեշտ
ճշմարտութիւն է:

Բայց ինչպէս անենք, որ այդ ուսումնա-
սիրութեան գործով գրաւենք մեր ինտելի-
գենցիային, որ դէպի ամեն բան անտար-
բեր է:

Արդեօք թէ Կ. Պօլսի և թէ Թիֆլիսի
ինտելիգենցիան կը կազմէ մի գրամազուլե-
կուղարկի այդ հաւաքած գրամով մի
երկու, երեք մարդ թիւրքաց չայաս-
տանը ուսումնասիրելու համար:

Չենք կարծում, որ մեր ինտելիգենցիան
այդ կանի, քանի որ տեսնում ենք նրա
կատարեալ անտարբերութիւնը, երբ մի
մարդ, որ նրա միջոցներով ուղարկված էր,
վերադառնում է թիւրքաց չայաստանում
արած ճանապարհորդութենից, որտեղ նա
հազար ու մի նեղութիւններ է քաշել,
խղճմուտը կերպով ժողովել է երկրի մա-
սին հարուստ տեղեկութիւններ, և ահա
այդ մարդու հրապարակասուութեանը մեր
ինտելիգենցիայից գրեթէ ոչ ոք ներկայ
չէ գտնվում:

Ահա ձեզ մի միջոց ձեզ համար անծա-
նօթ մի երկիր ուսումնասիրելու համար,
մի երկիր, որի վրա դուք բարոյապէս ներ-

գործել էք կամենում... Թոխմախեան լինի
դա, թէ ուրիշը, գնացել է Վանի նահանգ,
հազար նեղութիւններ է քաշել, ուսումն-
ասիրել է երկիրը, որքան իր մտաւոր և
բարոյական ցոփերը ներում էին, հաւաքել
է թւանշաններ, հաւաքել է տեղեկու-
թիւններ, բայց դարձեալ շատ քիչ ժո-
ղովուրդ է եկել լսելու թէ ի՞նչ կը
պատմէ նա մեզ... Ուրիշ ի՞նչպէս կա-
րելի է ուսումնասիրել մի անծանօթ եր-
կիր...:

Բայց մեր հասարակութիւնը, մանաւանդ
մեր ինտելիգենցիան նախապաշարմունքներ
ունի. Թոխմախեան բարձրագոյն ուսում
ստացած մարդ չէ, նա արհեստաւոր մարդ
է, նա ի՞նչ կարող է իմանալ, երեւի ասում
էին մեր ինտելիգենցիային պատկանողները,
որոնք կամ բոլորովին չեկան, կամ որոնցից
մի քանիսները թէ և ներկայ գտնվեցան,
բայց դասասուութիւնը չը վերջացած,
գուրս եկան դաշխիջ:

Ասենք թէ Թոխմախեան մի ինքնուս-
արհեստաւոր, բարձր ուսում չը ստացած
մարդ է, ասենք թէ նա իր դասասուութե-
ան մէջ չունէր մի խիստ սխտեմա, որ
կարելի էր պահանջել մի համալսարանա-
կան մարդուց, ասենք թէ նրա ոճը շատ
ծաղկած էր, բայց խօսէր կարող ուրա-
նաւոր, որ նա եղել է, ճանապարհորդել է
այն երկրում, որտեղ դուք չէք եղել, չար-
չարովի, հաւաքել է տեղեկութիւններ, և
պատմում է ձեզ, գուցէ ձեր հասկացողու-
թեամբ անկապ կերպով, այնու ամենայնիւ
այն ինչ որ դուք չը գիտէք:

Ասենք թէ նա մի հասարակ ճանապար-
հորդ է, մի արհեստաւոր, մի վաճառական
է, որ գնացել է այն երկիրը, որտեղ մեզա-
նից ոչ ոք չէ եղել, ասենք վերջապէս որ
նա Վասպուրականի կողմերից եկած մի
մշակ մարդ է, որ պատմում է մեզ այն,
ինչ որ ինքն գիտէ... Այնու ամենայնիւ
մեզ համար դա նոր պէտք է լինի, որով-
հետեւ ինչ որ նա գիտէ, մեզ ծանօթ
չէ...:

Բայց այնու ամենայնիւ դաշխիջը գրեթէ
զարդակ էր... Իսկ ուրիշ ի՞նչ կերպ կա-
րելի է ուսումնասիրել մի երկիր:

Եթէ մենք ձանձրալի և աւելորդ ենք
համարում լսել թիւրքաց չայաստանի մա-
սին մի ականատեսի պատմածները, նշա-
նակում է որ մեր հետաքրքրութիւնը դե-
պի թիւրքաց չայաստանը սուտ է,
կեղծ է:

Վերջապէս դասասուութեան ձևի կող-
մից անգամ, պնդում ենք որ Թոխմախեանը
աւելի լաւ խօսեց, քան թէ կարող են
խօսել մեր համալսարանականների մեծ
մասը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԶՄԻԱԾԻՆԸ ԵՒ ԻՐ ՍՏՈՐԱԳՐԵԱԼՆԵՐԸ

Երբ մի որ և է անձը բողոքում է Էջ-
միածնի կամայականութեան դէմ, թէ ան-
գութ կերպով ծնւում է նա իր ստորադ-

րեալներին և պաշտպան է հանդիսանում
նորանից տանջված անմեղ արարածնե-
րին, իսկոյն երեւում են խաւարաւոր
անձինք, որոնք փաստաբաններ են հա-
նդիսանում և պաշտպանում են Էջմիածնի
կամայականութիւնը, ասելով՝ թէ Էջմիա-
ծին ոչ մի գործում մեղաւոր չէ, թէ նա
այդպիսի բաներ երբեք չէ գործել, այլ բո-
լորը զրգարտութիւններ են և հնարված
են նորա թշնամիներից: Այսպիսով քողա-
կում են ճշմարտութիւնը և միաժամ հա-
սարակութեանը գրգռում են դէպի այն
անձը, որը քննադատում է Էջմիածնի ան-
գործունէութիւնը և կամայականութիւնը,
իրբե թէ սուտ և զրգարտանք:

Այժմ պարտաւորութիւն եմ համարում
մի քանի օրինակներ բերել Էջմիածնի կա-
մայականութեան և բողոքել նորա դէմ
(միայն իր ստորադրեալների վերաբերու-
թեամբ), իրբե մի նուստ պաշտպան այն
անմեղ արարածների, որոնք ենթարկված
են Էջմիածնի կամայականութեան, և կը
խնդրեմ Էջմիածնի փաստաբաններին, որ
նոքա իմ ամեն մի հարցմունքին ճշգու-
թեամբ և խղճմունքով պատասխան տան:
Թողնենք բազմաթիւ օրինակներ և յիշենք
միայն աւելի ոչ շատ հները, որոնք շատ
լաւ յիշում են ամենքը:

Վախճանվեցաւ Արեւ արք-կալիսկոպոսը
(Մխիթարեան), Էջմիածնի միտաբանութեան
մէջ այդ քանքարաւոր աշխատասիրողը, և
հրամայեց Մանկունին որ նորան թա-
ղեն ոչ թէ միայն առանց իր աստիճանին
պատկանեալ եկեղեցական հանգիսի, այլ և
միջակ անգամ առանց քահանայի, միայն
մշակներով Յիշում է՞ք. ի՞նչ էր պատճառը
մեծ. փաստաբաններ, խղճմունքով պա-
տասխանեցէք:

Վախճանվեցաւ Յովհաննէս Աւանան
արքեպիսկոպոսը, նորա անշունչ դիակի հետ
վարվեցան նոյն ձևով: Յիշում է՞ք. ի՞նչ էր
պատճառը:

Վերաբերելի (Տիգրանակերտ) առաջնորդ
Փիլիպպոս արքեպիսկոպոսը եկաւ Էջմիա-
ծին կաթողիկոսի հետ խօսելու կարեւոր
բաների վերաբերութեամբ, և Մանկունին
փիլոսոփայական պատասխանով, տարաւ և բան-
տարկեց մի դժոխային սենեակում: Յիշում
է՞ք. ի՞նչ էր պատճառը:

Չանցաւ ժամանակ և Էջմիածինը հրա-
մայեց, որ երևանի առաջնորդ ծերունի
Նիկողայար արքեպիսկոպոսից առնվի ար-
քութեան տիտղոսը և աքսորվի Գեղարդայ
վանքը, առանց հարցնելու նորա ոչ ծերու-
թիւնը և ոչ տկարութիւնը: Յիշում է՞ք.
ի՞նչ էր պատճառը:

Իսկ Թիֆլիսում մի ինչ որ Մամբրէի
հրամանով, Սուրբ Սարգիս եկեղեցու նոր-
ընծայ քահանայ տէր-Վոստանդին Արարա-
տեանը թողնելով իր ընտանիքը անպաշտ-
պան, աքսորվեցաւ Իմեթէթի Չխար կոչ-
ված մի խուլ տեղում, ուր ամբողջ վեց
ամիսներ տանջվելով դառն պանդխտութեան
մէջ, նորերումս հազիւ վերադարձաւ իր
տեղը: Յիշում է՞ք. ինչ էր պատճառը:

Եւ ահա այժմ Թիֆլիսի վանքի մայր
եկեղեցու Յովհաննէս աւագ քահանայ

Սարգսեանը, դեռ մի քանի ամիս սորանից
առաջ արգելվեցաւ քահանայութիւնից, և
երկար բողոքներից յետոյ, այժմ Էջմիածինը
հրամայել է, որ յիշեալ քահանայից առ-
նվի աւագութիւնը և համարվի հասա-
րակ քահանայ, բոլորովին ոտնակոխ անե-
լով սորա բազմամեայ ծառայութիւնները
իր ազգին և եկեղեցուն: Յիշում է՞ք. ի՞նչ
էր պատճառը:

Ամբողջ Թիֆլիսի բազմաթիւ հայ-քա-
հանաների մէջ միայն մէկը կայ (մենք ան-
ձամբ լաւ ճանաչում ենք), որը կարողացաւ
և կարող է իր անվիճելի ինքնաճանաչու-
թեամբ գիմարել հոգեւոր իշխանութեան
կամայականութեան: Գա քարափի եկեղե-
ցու Յովհաննէս քահանան է, և չը նայե-
լով որ տեղւոյ հայ քահանաների մէջ մի
աննշան տեղ է բռնում, բայց կարողացաւ
իր ճշմարտութեամբ մի այնպիսի գործ բե-
րել Թիֆլիսի երեւմի առաջնորդ Մակար
արքեպիսկոպոսի գլխին, որ ամբողջ հոգեւո-
րականութիւնը զարմանքով պաշարեց, և
այնուհետեւ Մակար սրբազանը արժան համա-
րեց, գրեթէ ահով, յիշեալ քահանայի հետ
վարվել ըստ օրինաց, և ոչ իրբե բռնակալ
իշխան: Այս դէպքը լաւ յիշում են դեռ
ևս Թիֆլիսի հայ հոգեւորականները:

Մենք, Էջմիածնի այս գործածների պատ-
ճանները շատ լաւ գիտենք, միայն առ-
այժմ թողնում ենք, որ Էջմիածնի փաս-
տաբանները իրանք պատասխանեն իրանց
կարծած պատճառները, իսկ եթէ նոքա
ուղիղ չը գիտեն, և կը ցանկան, մենք միւս
անգամ կը բացատրենք մանրամասնաբար
մեր գիտեցածները: Եւ այսպիսի անթիւ օ-
րինակներից ո՞ր մէկը նկարագրենք: Էջմիա-
ծնի փաստաբանները, դարձեալ կը բացա-
կանչեն, Էջմիածինը մեղաւոր չէ, փաս-
տեր բերեցէք, փաստեր:

Մենք այստեղ բաւականացանք միայն մի
քանի փաստեր առաջ բերելով, իսկ աւելի
ընդարձակ և մանրամասն տեղեկութիւնները
Էջմիածնի գործունէութեան մասին, ըն-
թեքցող կարող է տեսնել մեր հեղինակու-
թեամբ յօդված «Չայաստանի սովը և
Էջմիածինը» վերնագրով գրքի մէջ, որը
մոտաւոր ենք (եթէ յաջողվի) շուտով լոյս
ընծայել, և որի մէջ կը մերկանայ Էջմիա-
ծնի խորագիւլ և անկանօն կառավարու-
թիւնը...

Կ. ԱՄՍՈՍ

ՆԱՄՍԿ ՄԵՐ-ՂԱՐԱՔԻԼԻՒՄԻՑ

Մայիսի 17

Ամսոյս 16-ին տեղի ունեցած կարկառաւոր
առատ անձրեւի ժամանակ, մեր գիւղի ծխական
դպրոցի բոլոր դասաւանդներով գոյացել են լը-
ճակներ, գետակներ, առուակներ, կղզիներ և
թերակղզիներ. այնպէս որ այդ օրը եթէ աշխա-
հադութեան ուսուցիչը դաս ունենար, շատ հեշտ
կը լինէր նորա համար աշակերտների հետ պա-
րագիլը: Կաթիլքը այնքան սաստիկ է եղել, ինչ-
պէս առատ անձրեւ բաց օրում, 400—500 րուր-
քով կաղնված մատենադարանի գրքերը, որ ու-
սումնարանի սենեակներից մէկի մէջ է լինում,
համարեա բոլորովին փչացած կը լինէին եթէ

գրապետը չուտ նկատած չը լինէր այդ արդեօք այս դէպքի մէջ ձեռն պարտականութեան բացակայութիւնն է:

Ուսումնարանի բացման օրից հողաբարձութեանը վճռեւ են (գուր չը կարծէք թէ արեւելեան խնդիրը) ցեխ օրուայ համար ուսումնարանի դըրանը դեխակներ չինել տալու, որպէս զի ուսումնարանը մաքուր մնալու համար աշակերտները ներս մանկուս ոտերը մաքրեն: Ուստի դա մինչև 80 թիւ վերջը դեռ եւս հարց էր. 81 թին յիշեալ գործիքները չինել տուին. սակայն իր տեղը յարմարացնելու համար, դա եւս տակաւին հարց է մնացած. թող ընթերցողը երեւակայի թէ ինչ կը լինի ցեխ օրերը ուսումնարանի դըրանը: Արդեօք երբ պիտի է սխալվին մեր հողաբարձութեանը իրենց միաստեղծ անշարժութիւնը:

Ամսոյս 10-ին Բօգի գիւղում մի մարդ անձնաւազանութիւն է գործում: Ինչպէս պատմում են, նա վեր է առնում մի պարան, դնում է իրենց դարմանոցը և այնտեղ կախում: Այսինպէս հարսը բաղդի բերամուր դնում է դարմանոցը, յանկարծ տեսնելով կախվածին և չիմանալով նրա ով լինելը, շտապում է տանը ծանուցումն անելու. տանեցիք դալիս են և տեսնում, որ սպանվածը իրենց տան անդամներին է. ականջները ծագելով, գլխին ջուր անելով շատ են աշխատում կենդանացնել, բայց իզուր. ոչինչով չեն կարողանում օգնել:

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՅ

Մայիսի 27

Տեղիս հայոց երկես ուսումնարանների հողաբարձութեանը ընտրութեան վեց տարին լրացել է: Հարկաւոր է սրանց փոխել և նորերն ընտրել, բայց սրա վրա ոչ ոք մտածող չը կայ, մինչդեռ Աթոռակիսի կոնգրէսի զօրութեամբ հողաբարձութեանը ընտրութիւնը պէտք է երեք տարին մի անգամ լինի: Գործնում ենք սրա վրա թեմական վերափոխել և տեղիս հայ հասարակութեան ուսողութիւնը: Երբ որ նոր հողաբարձութեանը կընտրվեն, այն ժամանակ մի քանի խօսք կը նուիրենք հին հողաբարձութեանը:

Այստեղ յաճախ անձրևներ են դալիս: Արտերը մեծ առատութիւն են խոտանում, բայց թանկութիւնը դեռ եւս չարանակում է: Այսինքն պտղը ծախվում է 1 բ. 50 կ.—2 բ., մսի ֆունտը 10 կ., պանրի ֆ. 20 կ., իւղի ֆ. 60 կ. և այլն: Այս երկրաբան թանգութիւնը տեղացիների անհոգութիւնն է:

Վաղուց է Արշալույս քաղաքագլխի կարօտութիւն ունի, բայց սրա վրա ուշադրութիւն դարձնող չը կայ: Տարեց տարի քաղաքիս պարտքը աւելանում է, բայց ժողովուրդը այդ չէ գիտում: Արշալույս շատ մեծ պալատութիւններ ունի, բայց կարծես թէ ողնախեցիները այդ չեն տեսնում: Խորհուրդ ենք տալիս անդացիներին, որ մտածեն քաղաքագլխի համար, որով մեծ լաւութիւն աւրած կը լինեն իրանց քաղաքին:

ՆԱՄԱԿ ԲԱԿՈՒՅ

Մայիսի 21-ին

Այսօր ահա կատարվեց Բագուի «Մարդասիրական ընկերութեան» 17-րդ տարեդարձը ընկ. դահլիճում: Քաղաքիս հայոց եկեղեցում վերջացնելով պատարագը, առաջ քահանայ Բուդաղեանը հրաւիրեց եկեղեցում ներկայ գտնվող ամբողջ ժողովուրդը այցելել ընկ. դահլիճը, որտեղ կատարել միասին այդ օրվայ պատճառով հանգուցեալ Կայսր Ալեքսանդր II-ի համար հողահանգիստ, իսկ յետոյ այժման Կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչի համար մաղթանք: Ընկերութեան դահլիճը բաւական գեղեցիկ կերպով դարձրված էր: Իսկոյն աշակերտները և աշակերտուհիները երգեցին մի տխուր երգ, որից յետոյ օրիորդ Վարձեկեանը (վարժուհի քաղաքիս երկեսի դպրոցի), կարգաց մէկ գեղեցիկ ճառ թագաւոր Կայսր Ալեքսանդր II-ի սպանման առիթով, որ շատ տխուր ապստորութիւն ունեցաւ ներկայ գտնվող բոլոր հանդիսականների վրա: Սրանից յետոյ բժիշկ Արամեանց կարգաց մի ճառ գէպի «Մարդասիրական ընկերութեան» տարեդարձը, որից յետոյ ամբողջ ոտանաւորներ, իսկ աշակերտները և աշակերտուհիք

միասին երգելով մեծ ուրախութիւն պատճառեցին հանդիսականներին:

Վերջացնելով մեր խօսքը՝ խնդրում ենք օրիորդ Վարձեկեանին մեր խորին շնորհակալութիւնն ընդունել, որ նա առաջին անգամ ցոյց տուաւ մեզ իր թանգագին աշխատութիւնը: Թէպէտ նրա խօսքերը շատերին տխրութիւն պատճառեցին, այնու ամենայնիւ նրա ճարտաստութիւնը և համակրելի ձայնը չափազանց ազդեցութիւն ունեցաւ մեր վրա:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երեւան, մայիսի 23-ին

«Մշակի» 90 № կրեանից հաղորդում են ձեր ընթերցողներին, որպէս թէ մի 70,000 արժէք ունեցող տուն վաճառվել է 30,000-ի, որի աճուրդից 1,000 բուրլ է ստացել Գ. Եպիսկոպոս և ետ քաշվելով տունը թողել մի թուրքի, որի պատճառով եւս ստացել է ս. Մանուկունց շնորհակալութիւն և մի մատանի:—Շնորհակալութեան և մատանիի մասին ոչինչ յայտնի չէ ինձ, իսկ միւս հանդամանքների մասին, բարոյապէս պարտաւորված եմ համարում ինձ հետեւեալն ասելու:

Աճուրդից երկու օր առաջ տաթեացի Գրիգոր Եպիսկոպոսը Վ. Կաթողիկոսի հրամանաւ մի ժողով կազմեց խորհրդակցելու թէ ինչ կարժէ յիշեալ տունն առանձին և ինչքան իրան կից մի կտոր գետնով: Ժողովը եղաւ Երեւանում, պ. Վարդան Եղիազարեանին տանը, սրա նախագահութեան ներքոյ:—Ժողովը կազմված էր 7 հոգուց, որոց մէկն էլ եւս էի:

Ժողովը վճռեց որ աճուրդի ժամանակ առանձին տան համար Եպիսկոպոսը գնայ մինչև 30,000 բուրլ. իսկ եթէ տանը կից հողն էլ հետը լինի՝ մինչև 35,000-ը բարձրացնէ: Տունն առանձին դրվեցաւ աճուրդի, և Եպիսկոպոսը ժողովի գնահատութիւնից 700 բուրլի էլ աւելի էր վճարել: Այնու ամենայնիւ տունը մնացել էր աւելի ավել մի թուրքի վրա 31,700 բուրլով, եթէ չեմ սխալվում: Ահա գործի էութիւնը, որի ճշմարտութիւնը բոլորովին աղաւաղել է ձեր պատահալիս լիցիտելիցը: Գոց է տան տիրւթի թերաղբային հաւատ ընծայելով:

Մի և նոյն № մէջ «Արի Հայաս» ասված առուի մասին հաղորդած լուրն էլ է անհիմն. բայց ցաւում եմ որ այժմ ժամանակս չէ ներում իրադրութիւնը գրելու:

Ս. Բէգ-Նազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մօսկվա, 27 մայիսի

Խնդրեմ մեր այս քանի մի տողերին տեղ տալ ձեր պատասխան «Մշակ» լրագրում, որոնք, կարծեմ, հետաքրքրական կը լինեն հայ հասարակութեան համար: Մեր խօսքը Ս. Շահադիդեանի «Հրապարակախօս ձայն» գրքի տպաւորութեան վրա է, որ այս բոլորի տիրապետել է փոքրաթիւ Մօսկվայի հայերի սրտին: Այստեղի ընթերցող հայերը այնպէս յափշտակված են վերև յիշած գրքից, որ ասեմ թէ մի անասելի ուրախութիւն են գտել: Հոգեպայծառ փայտը չըրթո՞ւնք, նրանք միմեանցից հարցնում են. «Հը, կարդացի՞ր «Հրապարակախօս ձայն»ը, և այնուհետեւ ամբողջ տողեր ու երեսներ սերտելով, շտապում են գտնել պ. Շահադիդեանին, որ նրա ձեռք մտնողաբար սեղմեն, նրան աջուցութիւն ցանկանա: Կան և այնպիսի մարդիկ, որոնք առաջ հայերէն չը կարդալով, այժմ ուրախութեամբ կարդում են նոյն հետաքրքրական գրքը: Այս, մեր կարծիքով, մի միջնարկան երեւոյթ է: Եւ յիշաւի մի գիրք, այնքան մեծ և անկաշառ գրքով դրած, այնպէս եւս կարող չէր ներգրծնել: Գրքելով աղբի մէջ նոյն իսկ ազգի բարեբախտութեան և թշուառութեան խնդիրները, պտղը և համակրելի լեզուով հազարգելով իր հայրենակիցներին թէ ինչ է նշանակում բռն հասարակութեան ասած բանը, այլ և այդ բոլորը հաստատելով մեր հին ու նոր և երօպական մտաւոր շարժման օրինակներով,—պատուելի հեղինակը մի կողմից դնում է իր ամենաազնիւ լուծման տեղային լուսաւորութեան գանձանակի մէջ, միւս կողմից վկայում է իր բարեխիղճ և խորին ուսումնասիրութիւնը մեր գրականութեան:

Ձեր կամենում թաղցնել որ և մի քանի անձինք կան մեր մէջ, որոնց համար Նալբանդեանցը կամ Նազարեանցը ասել է «հասարակութեանը կամ Նազարեանցը» բայց պ. Շահադիդեանը այնքան երկայնաւիտ է, որ կարող է հանդիստ մընալ, որովհետեւ նա ինքը գրքի առաջին երեսներում ասել է. «բայց այստեղ, իմ գործառնութեան սկզբին եւս պիտի խոստովանեմ, որ ժամանակակից մարդերիս գծուար է անպղտոր տեսութեամբ կշռել իրողութիւնները, որովհետեւ, շատերը մեղանից յափշտակված են իրանց սեփական պատկերով ու մեծութենով, հետեւաբար և մտածում են փոխվել առասպելական նարկիզ ծաղիկի, և, եթէ այդ սրանց անկարելի է, աշխատում են որ և ուրիշները չը փոխվեն կամ փոխվեն փուշ: Գիտեմ, և այսօր կան մեր աշխարհում հայեր, որ մենք են գալիս դիւցազնական վարդանի սաղաւարտով կամ առաքելին մարդերի դէմքով, բայց ժամանակը ցոյց կը տալ որ դրանք կրկնէին խեղճատակներից աւելի չեն և որոնում են ծիծաղաւոր ամբողջ ծափահարութիւնը:»

Այս բոլորիս ստացանք «Մշակ» լրագրի 89 համարը, որի մէջ գուր, որպէս անկեղծ հրապարակախօս, յայտնում էք ձեր կարծիքը պ. Շահադիդեանի գրքի մասին: Մեր տպաւորութիւնը այնքան քաղցր է և բաւականացուցիչ, որ միայն կարող ենք պատուել և սիրել ձեզ:

Կարգացողներից մին

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գիտաբ. Ա. Արծրունի հաղորդում է մեզ Բերլինից հետեւեալը: «Շուտով այստեղից ուղևորվելու է Կովկաս նշանաւոր աւստրիական նկարիչ պ. Ջիլի, որ արդէն ամբողջ Ռուսաստանին յայտնի է իր գեղեցիկ նկարներով, որոնցով պատկերազարդ դարձրեց ռուս բանաստեղծ Վերմուտի գեղեցիկ գրութեանը: Ջիլիի հետ ճանապարհորդելու է դէպի Կովկաս, ինչպէս ինձ պատմեցին, մի երկամասորդ ռուս աղջիկ, նրա աշակերտուհի, որին աւստրիական նկարիչը իր աշակերտներից ամենանշանաւորն է համարում:»

«Толось» հաղորդում է որ այս օրերս դարձեալ կայանաւորվեցան Ս. Պետերբուրգում մի քանի անձինք, որոնք ծառայում են նաւատորմի մէջ:

Վիլնյայի «Presse» լրագրին Բոստով (Գոնի վրա) քաղաքից հաղորդում են որ այդ քաղաքի մէջ ցրված են եղել օսոյախոսական պրօկլամացիաներ, որոնց մէջ յեղափոխականները հրաւիրում են ռուս բանաւորներին այսօր հետ հանդիստ թողնել հրեաներին և սկսել ջարդել հարուստ աւաններին:

Յունիսի 1-ին, երկուշաբթի օր կատարեալ միջրի էր Թիֆլիսում: Ժամը 1-ին կէսօրից յետոյ վեր կացաւ քամին և գնալով սաստկացաւ մինչև ժամը 4-ը, թողով լցնելով ամբողջ քաղաքը: Այնուհետեւ կարկառուօրէն անձրև եկաւ: Քամու ժամանակ կողովեցան սնկեր մի քանի պատուհաններ, մազալիւններ մի քանի դռներ, այգիներում ծառերի աճողին ճիւղեր:

Երեւանից, օր. Ֆ. Տէր-Խաչատրեան հաղորդում է մեզ որ ունի թարգմանած հայերէն լեզուով «Пестрая книжка» վերնագրով գրքիկը, գործ Ֆ. Հոֆմանի և շուտով դիտաւորութիւն ունի տպագրել այդ իր թարգմանութիւնը:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը: «Պ. Կաթախտ Բերլինեանցի և պ. Օրբէլ Օրբէլեանցի մասնաւոր ուսումնարանում կազմակերպեց հակամակաբարձական մանրամասնութեանց դէմ երբ վերջերս «Մշակ» լրագրում մի քանի անաւորած լուրեր ու յօդուածներ տպվեցան, յիշեալ խորթ լուրեր ու յօդուածներ տպվեցան, յիշեալ լրագրից ուսուցիչ Ալեքսանդր Արարատեանցին վերաբերելով, հրաժարվեցին նրան վճարել ամսական վարձը իր աշխատութեան համար: Այն ժամանակ պարոնը գանդատվեց հաշտարար դատարան, որ գործը քննուց յետոյ, վճռեց 83 բուրլ առնել ուսումնարանի տէրերից և տալ Արարատեանցին: Պարոնը հաշտարար դատարանում բացատրեց թէ ինչպէս այդ դպրոցը մի առեւտրական բաց կրօնակ է, թէ ինչպէս խաւրում են վարձապետներին և յետոյ ամսական

շատ շատ 10 բուրլ են տալիս և այն: Ո՞րքան յետ է մնացած Թիֆլիս, որ Օրբէլեանի պէս մարդը, որ ոչ մի տեղ կը թողնի չէ ստացած և Բէլախեանցի կօշիկները սրբելով է կրթվել ու լուսաւորվել (նա Բելախեանցի ծառայ է եղել) ազգային խմբագրութիւնների և դպրոցական վերափոխութեան քրքի տակին համ վարձապետ է, համ ուսումնարանատէր և հարկերից աւելի երեխաներ փչանում են նրա ձեռքի տակ:»

Մինչև այժմ Ներսիսեան դպրոցի հողաբարձութիւնը մեզ ոչինչ չէ պատասխանում այն լուրի մասին, որ այդ դպրոցի գանձարանում կուրել է 3,000 բուրլ: Այդ լուրը մենք չենք չընարել, նրա մասին խօսում էր ամբողջ քաղաքը, նախ քան մենք գրէինք. մեր պարտաւորութիւնն էր յարուցանել խնդիր, նրան բացատրել տալու և հասարակական կարծիքը հանգամանելու համար: Կա մամուլի պարտաւորութիւնն է: Եթէ պ. պ. հողաբարձութեանը մեզ ոչինչ չեն պատասխանի այդ չարթված ընթացքում, մենք ստիպված կը լինենք հրատարակել այդ լուրը մայրաքաղաքի ռուս լրագրիներում և կը յիշենք թէ ովքեր են դպրոցի հողաբարձութեանը, թող խմանա պարոնները, որ նրանց չէ ստուգել իշմանի պէս լուծ մնալ, երբ հասարակութիւնը նրանցից հաշիւ է պահանջում: Վերջ միշտ միջոց ունեւով գրել մայրաքաղաքի ռուս լրագրիներում, մինչև այժմ խնայում էինք իշմաններ իր փողի հաշիւներով, բայց մի որ և է Ներսիսեան դպրոցի հողաբարձութեանին խնայելու չենք:

«Кавказский Курьер» լրագրում կարդում ենք հետեւեալ պ. Թաթմախեանի դատախօսութեան մասին: «Չը նախելով դատախօսութեան աւարկայի հետաքրքրութեանը, քիչ ժողովուրդ հաւաքվեցաւ. այն ինչ, կարելի է ասել, որ այդ դատախօսութիւնը արժէր որ ուշադրութեամբ լսէին այն բոլոր հայերը, որոնց մէջ մնացել է սիրոյ և համակրութեան կայծ անգամ դէպի իրանց բազմապաշար հայրենի երկիրը: Կատախօսի ամբիօնի վրա բարձրացաւ մի համեստ, բայց խելօք, ուշադիր, դիտող, վան քաղաքի բնակիչ մի բարեխիղճ երիտասարդ, լուսաւորված կեանքի փորձերով: Կատախօսութեան բովանդակութիւնը կազմում էր գլխաւորապէս վանի նահանգի ազգաբնակչութեան տնտեսական և սոստիտիկական դրութիւնը, բայց մասնաւոր հայերի, և ապա հայ հասարակ ժողովրդի բարոյական և ինքնաճանաչական մակերեւոյթի ընդհանուր տեսութիւնը: Այդ դատախօսութիւնը բովանդակութեամբ շատ հարուստ էր: Թող չենք տալիս մեզ կարծ յօդուածում թելել այն բոլոր խնդիրները, որոնց վրա ուշադրութիւն էր դարձնում դատախօսը,—խնդիրներ, որոնք շատ նորաձեւ էին, խոշոր, թէպէտ և սեղմված, բայց որոնց գեղեցիկ կերպով պարզեց դատախօսը, շնորհիւ իր բազմակողմանի, անմիջական և մօտիկ ծանօթութեան դատախօսութեան առարկայի հետ: Մենք, այնու ամենայնիւ, պէտք է կանգնենք նրա ամենազիջողութեանը, երկտերի վրա: Պ. Թաթմախեանը իր ձեռք բերած ստատիստիկական ճիշդ թանաչանների հիման վրա պարզեց, որ վանի նահանգի ազգաբնակչութեան մէջ տիրապետող տարրը հայերն են, որոնք պատմական յեղափոխութիւններով և հագրաբանական յիշատակաւորներով այդ հարուստ երկրի միակ ապաստարանն են կազմում: Առհասարակ արեւմտեաները, բոլոր ձեռակերտ և երկրորդական արդիւնաբերութիւնը բացառելու հայերի ձեռքումն են, և այս պատճառով նրանցից կախումն ունեն տեղային ազգաբնակչութեան բոլոր մնացած տարրերը: Կատախօսը ցոյց տուեց հասարակութեանը վանի հանազի հայերի ձեռագործ գանազանական բրդեղ կտորների բաւական հարուստ հաւաքածու, որոնք նշանաւոր էին իրանց գեղեցկութեամբ և օրինակելի լաւ յատկութեամբ և որոնք Կ. Պոլսում մրցում են Եւրոպական գործարանների արդիւնաճանաչութեան հետ: Կատախօսի խօսքերով, միակ սինը, որի վրա հիմնված է հայ ժողովրդի գոյութիւնը,—ոչ եկեղեցին է, ոչ հայ ինտելիգենցիան, բայց հայ գիւղացին է, նրա կոշտացած ձեռքերը, որոնցից մենք երեսներս չուր ենք տալիս, բայց որոնք համբերութեամբ տարան ճակատագրի ամենամեծ փոփոխութիւնները, պատմական և տնտեսական աւերող յեղափոխութիւնները,—և որոնք դեռ եւս շարունակում են պաշտպանել ազգային հպարտութեան ինքնաճանաչութիւնը: Գիւրգերը, պ.

Թոթմանեանի կարծիքով, պատմականապէս մօտիկ կապով են հայերի հետ, որոնց նրանք աւելի են համակրում, քան թէ թիւրքերին: Կան փաստեր, որոնց հիման վրա կարելի է ճշմարտութեան շատ մօտիկ մէկ ենթադրութիւն կազմել քիւրդերի ծագումն մասին հայերէն: Հայերի ժողովրդական և կրօնական բազմաթիւ ծէսերը քիւրդերի մէջն էլ են գտնուում, նրանց տիպը հայերին շատ նման է,—այս բոլորը հաստատում են այդ ենթադրութիւնը: Գառաւիջը մասնա-ցոյց արաւ և այնպիսի հանգամանքներով վրա, որոնք ապացուցանում են, որ շատ հեշտ է հայերին ազգային և քաղաքական մօտիկ կապ հաստատել թէ քիւրդերի և թէ ասորիների հետ, մանաւանդ լեռնային ցեղի գլխաւոր Մարշիմանի հետ, որը հերոսութեան և ազատ կեանքի ծարաւի զօրութեամբ կազմել է և պահպանում է անկախ գրութիւն: Հայոց ուսումնարանները մեծ յառաջադիմութեամբ կարող էին ծառայել Վանի նահանգի և Փոքր-Ասիայի համարեա բոլոր ազգաբնակչութեանը, և հայկական ազգեցեւորները կարելի է տիրապետող չլինել և քաղաքական կարող ողակ դարձնել զանազան ազգաբնակչութիւնները մէկ ամբողջի մէջ միացնելու, քաղաքական կանոնաւոր կազմակերպութեան համար Փոքր-Ասիայում: Հայ ազգաբնակչութեան անհատական աւելումը յետոյ, որի պատճառն էր վերջին պատերազմը, Վանի սարավանդի հրդեհից յետոյ, կատաղի սովից յետոյ հայ ժողովուրդը, կարծես, կախարդական զաւաղանի զօրութեամբ, նորից սոսի կանգնեց, կրկին գործում է հայ երկրագործի արօրը, և հայերի անտեսական գրութիւնը կրկին իր սովորական ընթացքն է ստանում: Վերջին թէ պատմական և թէ անտեսական անցքերը ապացուցեցին, որ բոլոր Փոքր-Ասիան միայն հայերից կարող է միջոց ստանալ ապրելու: Սովետայ հայկական յանձնաժողովը, որ կազմված էր Վանում ամենքից պաշտօն խրման հայրկի աւաճարդութեան տակ, շատ մեծ ծառայութիւններ մատուցեց: Նա, առանց զանազանելու դաւանութիւնները և ազգութիւնները, բոլոր սովորներին հայ էր բաժանում, խնամում էր բոլոր թշուառներին, լինել նա հայ, թիւրք, քիւրդ, ասորի և այլն: Այդ ուղղութեամբ հայերը մեծ հեղինակութիւն ստացան Փոքր-Ասիայի բոլոր ազգաբնակչութեան մէջ, և այդ բանի շնորհիւ, խրման հայրկի ազգեցեւորները այս երկրի բոլոր ժողովուրդների վրա ազդեցիկ է: Կանգնեց սրա վրա, ցանկանալով, որ այս հարուստ և հետաքրքիր զատարկութիւնը կրկին նրանց համար, որոնք առիթ չունեցան լսել նրան: Կատարականութեանը ներկայ եղող հասարակութիւնը ողորդված կերպով ծափահարեց այ թոթմանեանին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԱՆ

Լրագիրները հաղորդում են, որ Ֆրանսիական սենատը թշնամաբար է վերաբերվում պատգամաւորների ժողովից ընդունված ընտրողական ձևի օրինագծին: Անտառի նախագահ Լէօն Սէ չէ խնայում իր բոլոր ազդեցութիւնը, որ այդ օրինագիծը հաստատվի սենատի մէջ, բայց նրա աշխատանքները դեռ չեն աջակցել: Վաղիկուտն արգէն ներկայացրեց այն մասնաժողովի գեկուցումը, որ պէտք է քննել պատգամաւորների ժողովի հաստատած ընտրողական օրինագիծը: Զեկուցման մէջ ասված է, որ շատ վատ կը լինի, եթէ սենատի և պատգամաւորների ժողովի մէջ անբաժանելիութիւն յարուցվի և որ սենատը իր կողմից առիթ չի տալ այդպիսի անբաժանելիութեանը: Այնուհետեւ զեկուցման մէջ ասված է, որ ցուցակներով ընտրութեան չորհուրէ կարող է երևան գալ մէկը, որ կը կամենայ իշխանութիւնը իր ձեռքը գցել և այն ժամանակ ոչ պատգամաւորների ժողովը և ոչ սենատը կը կարողանան նրան ընդգիմանալ, որովհետեւ նա ընտրված կը լինի ընդհանուր ձայնատուութեամբ: Զեկուցման քննութիւնը յետաձգված է:

Գամբետտա վերադարձել է Փարիզ իր ճանապարհորդութիւնից և անդադար բանակցում է Լէօն Սէի հետ, որպէս զի կարելի լինի պատգամաւորների ժողովի և սենատի մէջ համաձայնութիւնը կայացնել: Բացի այդ Գամբետտա բանակցում է առաջին մինիստր Ժիւլ Ֆերրիի հետ, որպէս զի զրգէ նրան ազդել սենատի վրա բնորոշական նոր օրէնքը ընդունելու համար: Պատգամաւորների ժողովի մէջ եղած վիճարկութիւնների ժամանակ մինիստրները պէտք է չեղոք մնային, որովհետեւ այն ժամանակ նրանց մէջ այդ հարցի մասին ոչինչ համաձայնութիւն չը կայ: Իսկ այդ արգէն յայտնել է իր ցանկութիւնը, Գամբետտայի կարծիքով, մինիստրները պարտաւոր են պաշտպանել ժողովի վճիռը: Կենտրոն կաշտպանել ժողովի վճիռը: Կենտրոն կաշտպանել ժողովի վճիռը: Կենտրոն կաշտպանել ժողովի վճիռը:

Նորերում հասաւ Փարիզ Տունիսի բէյի նախկին մինիստր Մուստաֆա-փաշա, որպէս զի յայտնէ հանրապետութեան նախագահին յարգանքի և հաւատարմութեան զգացմունքները, որ ունէ իր թագաւորը դէպի Ֆրանսիան: Ֆրանսիական կառավարութիւնը յայտնել է, թէ Տունիսի բէյի դրութիւնը կախված կը լինի այն ապահովութենից, որ բէյը կը ներկայացնի դաշնադրութիւնը ճշգրտութեամբ կատարելու մասին:

Բէյի մէջ սպանված «Telegraph» լրագրի թղթակիցը, որ մի ժամանակ կոմունիստ էր, մեծ պատուով թաղվեցաւ Տունիսի մէջ: Նրան սպանող արարը անյապաղ մահուան պատժի ենթարկվեցաւ:

ԱՆԳԼԻԱ

Իրլանդիայի գրութիւնը բաւական մեծ զեկուարութիւններ է պատճառում անդլիական կառավարութեանը: Իրլանդացիների բացարձակ ընդդիմադրութիւնը կալուածատէրերի լորդերին, որոնք ստացել են այդ հողերը իբրեւ ընծայ և զանազան արտօնութիւններ ունեն, զեկուար թէ վերջանայ Գլադստօնի մշակած մասնաւոր վերանորոգութիւնների օգնութեամբ: Ժառանգական Ֆերմերները պահանջում են, որ ճանաչվեն նրանց ժառանգական կալուածական իրաւունքները և հրաժարվում են վճարել կալուածական հարկը, մինչև մի օրէնք չընդունվի, որի համեմատ հողերը նրանց մշակող Ֆերմերի սեփականութիւն դառնան յայտնի ժամանակամիջոցի ընթացքում: Կալուածական միութիւնը սպառնում է հաւանքել այն Ֆերմերներին, որոնք կամուտրապէս կը կատարեն իրանց պարտականութիւնները կալուածատէրերի վերաբերութեամբ: Անհրաժեշտ է ի նկատի առնել, որ շատ Ֆերմերների իրական յարաբերութիւնները դէպի նրանց մշակած հողերը նոյնքան հին և անվիճելի են, որքան կալուածատէր լորդերի աւատական իրաւունքները: Այժմ հարցը նրանում է, որ մի համաձայնութիւն կայացվի կալուածատէրերի և Ֆերմերների մէջ, այլ որ լորդերի կալուածական իրաւունքները յայտնի պայմաններով բոլորովին յանձնվեն տեղական ազգաբնակչութեանը: Արդիհետեւ Ֆերմերները մեծ մասամբ հրաժարվում են վճարել կալուածական տուրքերը, կալուածատէրերը ստիպված են լինում գաղտնաստանական միջոցների գործադրութեանը դիմել և դա չափազանց զայրացնում է ժողովրդին: Կալուածատէրերը օգուտ են քաղում իրանց իրաւունքից՝ խիլ հողը այն Ֆերմերից, որ

չէ վճարում կալուածական տուրքերը, բայց այդ իրաւունքի դէմ բողոքում է Նրլանդիայի ամբողջ ազգաբնակչութիւնը ու այդ բողոքները և ընդդիմադրութիւնը ուղղված են լինում նոյնպէս և իշխանութեան դէմ, որ զինուորական միջոցներով ձգտում է պահպանել օրէնքի ոյժը: Կառավարութիւնը չէ համարձակվում ոյժ չը գործադրել, որպէս զի երկրի մէջ անիշխանութիւն չը տիրէ, իսկ գործադրած արտաքոյ կարգի և խիստ միջոցները նպաստում են իրլանդիայի և Անգլիայի փոխադարձ առեւտրական զարգացմանը: Վաղ թէ ուշ իրլանդական կալուածատէրերի և երկրագործների յարաբերութիւնները պէտք է վերջնականապէս որոշվեն և աւելի լաւ է, որ այդ զործին իրանք ձեռնարկեն, քան թէ իրլանդացիները նրան իրագործեն յեղափոխութեան օգնութեամբ:

ԳԵՐՄԱՆԻԱ

Վերջին տարիների ընթացքում իշխան Բիսմարկ, Գերմանիայի ներքին հարցերով զբաղված, հանգիստ էր թողել եւրոպական դիպլոմատիային և արտաքին գործերի վերաբերութեամբ հետեւում էր չեղոք պահպանողական քաղաքականութեանը: Իսկ այդ անգործունէութիւնը ամբողջ եւրոպային առհասարակ և մանաւանդ Գերմանիային աւելի մեծ օգուտ է տալիս, քան թէ միջազգային ամենաանհաւուստ հոգսերը:

Գերմանական խաղաղասիրութեան ազդեցութեան շնորհիւ, որի պատճառը երկրի ներքին ծանր դրութիւնն է, փոքրաւուսում և թուլանում է միւս պետութիւններին երկիւղը, հաստատվում է ընդհանուր զինուորված խաղաղութիւնը, Ֆրանսիան սկսում է մոռանալ 10 տարի առաջ իրան հասցրած վէրքերը և այլն:

Իշխան Բիսմարկի արտաքին չեղոք քաղաքականութիւնը, որ սահմանափակվում է եւրոպական զանազան պետութիւններին փոքր ծառայութիւններ մատուցանելով, աւելի նպաստում է եւրոպական ընդհանուր խաղաղութեանը, քան թէ քաղաքական ամենախրաւամանի դաշնակցութիւնները: Մի քանի տարի առաջ անկարելի էր հաւատալ, որ Ֆրանսիական մինիստրը կարող է զրազրութիւն ունենալ գերմանական մի լըրագրի հետ և յայտնել իր կարծիքը Գերմանիայի գովելի խաղաղասիրութեան մասին: Իսկ այժմ Բարտելմի Սենտ-Խլեր զրեց այդպիսի մի նամակ «Deutsche Rundschau» լրագրին և թէպէտ Ֆրանսիական մամուլի մի մասը բողոքեց այդ նամակի դէմ, կարծիք յայտնելով, թէ չը նայելով Գերմանիայի խաղաղասիրութեան մեծ նշանակութեանը, լաւ չէ, որ Ֆրանսիական մինիստրը բացարձակ այդպիսի նամակ գրէ, բայց իսկապէս Ֆրանսիացիների վրէժխնդրութիւնը Սեզանի համար հետզհետեւ անցնում է և երեւակայական է դառնում: Ֆրանսիական հապարակական կարծիքը այդպիսի փոփոխութեան պատճառը Գերմանիայի խաղաղասիրութիւնն է ընդհանրապէս և մանաւանդ Տունիսի վերաբերութեամբ:

ԱՄԵՐԻԿԱ-ՈՒՆԳԱՐԻԱ

Ունգարական ազգային ժողովը բացվեցաւ զահական ճառով, որտեղ կառավարութիւնը յայտնում է իր բաւականութիւնը այն առիթով, որ նա ժողովից ազգասիրաբար պաշտպանվեցաւ: Այդպիսի պաշտպանութեան օգնութեամբ արտաքոյ կորգի ծախսերը և չը հատուցված պարտքերը

կարելի է լրացնել առանց դիմելու այնպիսի միջոցների, որոնք վնասակար են պետական կրեդիտի համար: Այնուհետեւ զահական ճառի մէջ բերված են այն օրէնագրական միջոցները, որոնք պէտք է ընդունվեն երկրի բարօրութեանը նպաստելու համար: Երկրի բարօրութեանը արեւելքի հետ արդէն որոշված է, իսկ պետական պարտքը բաւական թեթեւացած է առանց վնասելու պարտատէրերի շահերին: Վերջապէս յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ խոստանում են խաղաղութեան երկարատեւութիւնը, որովհետեւ պետութիւնները բոլոր վիճելի հարցերը վճռում են խաղաղ ճանապարհով և իրանց մէջ համաձայնութիւն կայացնելով:

ԻՏԱԼԻԱ

Իտալական նոր մինիստրութեան անդամները արգէն երգվեցին թագաւորին: Արտաքին գործերի մինիստր Մանչինի յայտնեց մի շրջաբերականով Իտալիայի ներկայացուցիչներին օտար պետութիւնների մօտ, որ նա ընդունել է արտաքին գործերի մինիստրութիւնը: Ընդդիմադրական կուսակցութեան լրագիրները այնպէս են յարձակվում նոր մինիստրութեան վրա, որից երեւում է, թէ իտալական պարլամենտի նիստերը չափազանց աղմկալի կը լինեն: Մանուսանդ անբաւական են, որ գեներալ Ֆերրերօ պատեւագմական մինիստր նշանակվեցաւ Միլանի օկո, որ չափազանց շատ զրամ էր պահանջում պատեւագմական ծախսերի համար:

Համբարձման օրը պապը ընդունեց գերմանացի մի քանի ուխտաւորներին, որոնց ասաց, թէ կաթոլիկ եկեղեցու գրութիւնը Գերմանիայի մէջ չափազանց ծանր է և ենթարկված է իր թշնամի իշխանութեանը: Այնպիսիով գերմանական կառավարութեան և Վատիկանի մէջ եղած բանակցութիւնների վրա, պապը ասաց, թէ նա յայտնել է այդ բանակցութիւնների ժամանակ, որ կառավարիչների իշխանութիւնը անկախ պէտք է լինի միայն աշխարհային գործերի մէջ, իսկ ինչ կը վերաբերի հոգու ազատութեանը, եկեղեցին պէտք է ունենայ կատարել և անսահման իշխանութիւն: Ընդհանուր հարցերի վերաբերութեամբ քաղաքական և հոգեւոր իշխանութիւնների մէջ համաձայնութիւն կայացնելու համար անհրաժեշտ է նրանց բարեկամութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Русский Курьер» լրագրին հեռագրում են, որ Բոլշակովի մի քանի քաղաքներում կը յայտնվի պաշարման դրութիւնը, նայն իսկ Պոֆիա մեղաքաղաքում: Սիւսոփայում գործեր են հատարվում:

Վիէնայից հեռագրում են, որ Զապրեի (Ագամի) ակադեմիայի ուսանողները մի ուղերձ ուղարկեցին Կարլովիւվին, որի մէջ նրանք խորհուրդ են տալիս Բոլշակովին պաշտպանել ազատութիւնը, զոհելով իրանց կեանքն անգամ:

Ֆրանց-Յովսէփ կայսրը մի արտակարգ հանդիսաւոր ընդունելութիւն արաւ իշխան Միլանին այս վերջինի: Վիէնա գալու ժամանակ:

Ֆարիցից «Հափտի ընկերութիւնը» հեռագրում է որ Տունիսի արջաւանքի գործի մի մաս չուտով վերադառնում է Ֆրանսիա:

«Indep. Belge» լրագիրը հաղորդում է որ Կալանտարոված Միլան-փաշայի քարտեզարկն աշտրկեցաւ փաշայի և Պոլսից Զմիւռնիա և այնտեղից Ֆրանսիա: Ասում են փախչողը իր հետ տանում է նշանաւոր զօկումներ:

«Presse» լրագիրը կարծում է որ Սօֆիայի մէջ իշխանական պալատի կառուցման ընդմիջելու կապ ունի Բոլշակովի պարտատուող խաղաղութիւնների հետ: Երկիւղ ունեն որ Բոլշակովի կը ծափ ապստամբութիւն, որ ըստպանում է իշխանի գահին:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՔԸՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Չը նայելով մարտերի առկայությունը առաջվա գնորդ կը ծախվեն.
ԿՈՆԳՈ-ԹԵՑ 1 ռ. 5 կ. և 1 ռ. 10 կոպ., շատ լաւ. **ՄՕՆԻՆԳ** 1 ռ. 20 կ. և 1 ռ. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՆԻ** 1 ռ. 60 կ. և 1 ռ. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ** **ԹԵՑ** 2 ռ. առանց թղթի: Անգլիական թէվոլիւրներ 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20 ռ.—200 ռ. Անգլիական խանութի մէջ: Գործադրութիւն **ԲԱՐՆԱՐԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջոնսոնի **ԿՈՂՊԵՔՆԵՐԸ**, Տուրնօրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաօ- շոկոլայի ծախելու համար, որոնք վարկի հանդիսի ժամանակ ոսկէ մեզայ ստացան: **ՀՈՏԱԻԷՏ ԹԵՑԻ ՖՈԻՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՑԱՄԱՆՈՎ** 1 ռ. 65 կ. և ամենալաւ 2 ռ. 30 կ.: Սառնակներին օգտակար է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ռ., կոնֆետներ հաղի դէմ 60 կ. Փոնտր:
83—100

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարաններին ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննու- թիւները
Մայիսի 22 և 23-ին կաթողիկէ Ս. Վէրդ եկ. ուսումն.
" 25-ից—30-ը Հաւլարարի Մարիամեան օր. ուսումն.
" 28 և 29-ին Կուկիու Թանգոյեան օր. ուսումն.
" 30-ին Հաւլարարի Ս. Միքայի եկ. ուսումն.
Յունիսի 1 և 2-ին Կուկիու Ս. Աստուածածին եկ. ուսումն.
" 3 և 4-ին Ջորաշէն եկ. ուսումնարաններում.
" 5-ին Շամբուեցոյ եկ. ուսումնարանում.
" 6-ին Ջորաբաշի Ս. Վէրդ եկ. ուսումնարանում.
" 8-ին Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.
" 9-ին Ջուղուրէթի Ս. Աստուած եկ. ուսումնարաններում.
Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ			
Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ռ. 5 կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ	Ֆ. 1 ռ. 30 կ.
—	1 ռ. 10 կ.	—	Ֆ. 1 ռ. 40 կ.
—	1 ռ. 20 կ.	—	Ֆ. 1 ռ. 60 կ.
—	1 ռ. 40 կ.	—	Ֆ. 1 ռ. 80 կ.
—	1 ռ. 60 կ.	—	Ֆ. 2 ռ. —
—	1 ռ. 80 կ.	—	Ֆ. 2 ռ. 50 կ.
Ամենալաւը	2 ռ. —	—	Ֆ. 3 ռ. —
85—100			

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍ-ՏԵՐ**, մաշկերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադար- ձնող: Գինը 2 ռ. շերտ, **ՓՈՍՏԱ-ՅՈՎ** ուղարկված 2 ռ. 49 կոպ.: **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ:



Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻԻՂ**, մաշկերը ամրացնելու հա- մար, 1 ռ. ամանը: Վրձին զիւս- ցաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ- ՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն:
73—100

Ժողովել եմ, ժողովում եմ և շուտով 'ի լոյս պետք է ածեմ հայկական ծայնագրու- թեամբ "Շաղկաբաղ ծայնագրեալ երգա- րան": ուստի խնդրում եմ ծայնագրագէտ- ներին և այն պարոններին, որոց մօտ գը- տանվում են ազգային երգեր թէ հայկա- կան և թէ եւրօպական ծայնագրութեամբ (նօտաներով) բարեհաճել մինչև յառաջա- կայ օգոստոս ամիսը ուղարկել ինձ: Երգեր ուղարկողների ազգանունները կը տպա- գրուին երգարանի վերջը և մի-մի օրինակ էլ ձրիպպէս կը ստանան: Վարձատրութիւն պահանջողները ևս կարող են իրանց պայ- մանները յայտնել: Իմ հասցէն: Տիֆլիս, Եզ- նիկ քահանայի երգչիկանց: 4—10

Արդէն վաճառվում է
ԻՆՁ ԲԱՆ Ե
ԺԱՆՏԱՆՏԸ
Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից: Ժո- ղովրդական և հասարակաց մատչելի խրատ բժիշկ Պ. Ա. Իլինսկոյ:
Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրանց
Գինն է 15 կոպ. 100-ներով գնողներին զի- ջուսն կը լինի: Մէր հասցէն՝ Վէ Զրիվան
А. Гуламирancy

ԱՄԱՐԱՆՈՑՆԵՐ
Տիֆլիսից, — մօտ 8 վերստ հեռավորու- թեամբ, — ՋԱՔԱՐԱՇԵՆՈՒՄ, փոքր Լիլոյի մօտ, — վրաց Խուլթեայի կէս ճանապարհի վե- րայ տրվում են վարձով ԵՐԿՈՒ ԱՄԱՐԱՆՈՑ- ներ, իւրաքանչիւրը՝ երեք սենեակից բաղ- կացած իւրեանց առանձին խոհանոցներով: Գնի մասին կարելի է հարցնել տիրօջը— Ջաք. Գրեգորեանցին — նորա գրախանու- թեումը:
2—10

ԱՌԵՏԲԱԿԱՆ ՏՈՒՆ
ՊՕՊՈՎ Կ. Ե Ս. ԵՂԱՅՐՆԵՐԻ
Մ օ ս կ վ ա յ ի մ է ջ:
Պատի. ունենք յայտնել ընդհանրու- թեանը, որ ներկայ տարուայ յունիսի 2-ից Թիֆլիսի մէջ, Գօյօվինսկի պրօսպեկտի վրա, Միլիմանովի տանը կը բացանենք մեր մա- զազները, ուր կը վաճառուի թէ մեծ և թէ փոքր քանակութեամբ (оптовая и рознич- ная продажа) մեր Ֆրիմայի չալ (թէյ) կը- շուսած Մօսկվայում մեր տանը, մեր անձ- նական հօդողութեան տակ: Բացի թէյից Թիֆլիսի մեր մազազներում կը մանրափաճա- ունի նոյնպէս շաքար և զափա:
3—5

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում կատարվաց փողոցի անկիւնում ՄԻ- ԲԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼԱՍԵԱՆԻ պահեստում:
Օտարաբաղաբացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.
11—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՅՅԻԻ ԽԵՆԹԸ**՝ անու- նով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահմադ-Յալոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՋ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.
Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБЪЛУ АП- РЪСЯНЦУ.

144 Արծրունու դալէքա 144
ամենախիտ պահեստ
մերէի և հայերէնի:

Въ Редакціи газеты
«МПАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

«ԽԵՆԹԸ»
ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՀԱՅԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՅՅԻԻ
Տպված մաքուր թղթի վրա, զերբ բաղ- կանում 400 երևից: Թիֆլիսում ծախվում է "Մշակ" խմբագրատանը, "Կենտրոնական գրախանայում", "Կովկասեան գրա- վաճառանոցում": պ. Ջաքարիա Գրեգորեան- ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզա- ջեանցի, Հովեհանցի ծխախոտի մազազին- ներում:
Գինն է 1 ռուբլ 20 կոպ.:

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ԳԱՆ ԹԵ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մաքուրա- ներ, կոնֆետներ, **ԿԱԿԱՍ**, բրինձ, Ա- ՄԱՆԵՂԷՆ, բօխներ, թատեր, երես լուա- նալու ամաններ, չայիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судна), մատուցարան- ներ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գլաշներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակ- ներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ, պլում- ներ, ՄԱՀԱԿԱՆՆԵՐ, ՀԱԳՈՒՍ, տրիկո, պա- ռուսին, թաշկինակներ, երկարիչներ, կիտո- կա, գուլարներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԵՐ, խե- րես, կոնեակ և այլն: ԹէՑ մեծ քանակու- թեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԳՐ 44 ռ., 46 ռ., 48 ռ., 50 ռ., 52 ռ., 54 ռ., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:** Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մա- գնեցիւ, խոնր ԾԱՐԱԻՆ դէմ, ԽԻՆԱՅԻ զի- նի ջերմի դէմ, կարբօլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ վատերկիօգե- տի համար, պարսկական փօշի: 7—100

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ցանկանում է ստանալ **ՀԱՇՈՒԱՊԱՀԻ** պաշտօն ա- ու եւրասկան տան, բանկային հիմնա- կութեան մէջ, կամ մասնաւոր անձի մօտ: Պարապել է **ԵՐԿԱՐ** ժամա- նակ **ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՊԱ-** **ՀՈՒԹԵԱՄԲ:** Գիտէ ՖԲԱՆՍԻԵ- ԲԷՆ, ՌՈՒՍԵՐԷՆ և **ՀԱՅԵՐԷՆ** Լեզուները: Հասցէն թողնել **«ՄՇԱԿԻ»** խմբագրատանը:
1—2 (2)

ՄԵԺԵՎՈՒ ԴԵԺԵՆԵՐ ՍԷՐ- ԳԷՑ ԻՎ ԱՆՈՎԻՉ ԲԱԳԱՏՈՒ- ՐՈՎ ընդունում է. կազմել ՅԱՏԱԿԱԳՆԵՐ (պլաններ), գծազիւրներ, պրօֆիլներ, կա- տարում է կայուածներին, հողերի և ան- տառների բաժանումն գնահատողական գիտնական հիմունքների վրա, կատարում է ընդօրինակումներ (съемки) և հարթա- չափութիւններ (нивелировка) ԲԱԺԱՆՈՒՄ Է ՍՆՏԱՌՆԵՐԸ կանոնաւորապէս գործածե- լու համար, գնահատում է հողերը, ԽՈՐ- ՀՈՒՐԿՆԵՐ Է տալիս երկրաչափական և կալուածական գործերի վերաբերութեամբ և մի և նոյն ժամանակ կալուածական գոր- ծերի մէջ մասնագէտ լինելով իրաւաբանա- կան, տեխնիկական և տնտեսական կողմերից, պատրաստ է որ և է հիմնարկութեան հա- լատարմատար լինել կալուածական և եր- կրաչափական գործերի համար: ՀԱՍՑԷՆ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ թողնել "ՄՇԱԿԻ" խմբագ- րատանը:
4—10